ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2025 թվականի N 370 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 2060-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանը «Հայաստանի Հանրապետության պետական» բառերից առաջ լրացնել «Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետը» բառերով:

2. Որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն կարգի իմաստով սուբսիդիան պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի, աջակցության ծրագրերի շրջանակում վարկի կամ լիզինգի տոկոսադրույքի, վարկի կամ լիզինգի կանխավճարի մասնակի կամ ամբողջական, ինչպես նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում արտադրության մակարդակի վրա ազդելու կամ իրականացված աշխատանքների դիմաց կազմակերպության կատարած ծախսերի կամ դրա մի մասի փոխհատուցումն է: Սուբսիդիան ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռքբերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը և կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է՝ բացառությամբ ներդրումային ծրագրերի շրջանակներում արտադրության մակարդակի վրա ազդելու կամ իրականացված աշխատանքների դիմաց կազմակերպության կատարած ծախսերի կամ դրա մի մասի փոխհատուցման դեպքերի: Սույն կարգի իմաստով ներդրումային ծրագիր է համարվում տնտեսավարող սուբյեկտի նախաձեռնությամբ ներկայացված, պետական օժանդակության կարիք ունեցող և նախատեսվող ներդրումների ծավալը նախանշող ծրագիրը:».

2) 8-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) համապատասխան իրավական ակտը, որով սահմանվում է սուբսիդիայի տրամադրումը, ինչպես նաև բյուջետային ծրագրի և միջոցառման անվանումներն ու դասիչները, որոնց շրջանակներում տրամադրվում է սուբսիդիան:».

3) 8-րդ կետի «զ» ենթակետը «չափը» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝

«, որը կարող է տրվել կազմակերպության կատարած ծախսերի դիմաց.».

4) 8.3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.4-րդ կետով՝

«8.4. Սույն կարգի 6-րդ կետով, 8-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերով սահմանված դրույթները չեն տարածվում աջակցության ծրագրերի շրջանակում վարկի կամ լիզինգի կանխավճարի, վարկի կամ լիզինգի տոկոսադրույքի, ինչպես նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում արտադրության մակարդակի վրա ազդելու կամ իրականացված աշխատանքների դիմաց կազմակերպության կատարած ծախսերի կամ դրանց մի մասի փոխհատուցման դեպքերի վրա:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) որ սուբսիդիան պետության հանձնարարությամբ և որոշած գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի, աջակցության ծրագրերի շրջանակում վարկի կամ լիզինգի տոկոսադրույքի, վարկի կամ լիզինգի կանխավճարի մասնակի կամ ամբողջական, ինչպես նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում արտադրության մակարդակի վրա ազդելու կամ իրականացված աշխատանքների դիմաց կազմակերպության կատարած ծախսերի կամ դրանց մի մասի փոխհատուցումն է:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ